Կարգապահական գործ թիվ 17182

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018թ-ի ապրիլի 19-ի թիվ 99-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/77-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԳԵՎՈՐԳ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Հրանտ Անանյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Տարոն Սիմոնյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Գևորգ Մելքոնյանին (արտոնագիր՝ 224) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

23.10.2017թ. Պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Մալաթիա- Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան)** դատավոր Ն. Կարապետյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 16.10.2017թ. որոշումը **(այսուհետ նաև՝ Որոշում)**, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵՄԴ/3474/02/16 քաղաքացիական գործի քննության ընթացքում փաստաբան Գևորգ Մելքոնյանն անհարգալից վերաբերմունք է դրսևորել Դատարանի նկատմամբ: Մասնավորապես, նշված գործով 13.10.2017թ. նշանակված դատական նիստի ժամանակ հարցաքննվել է գործով վկան, որին փաստաբան Գևորգ Մելքոնյանի կողմից հայցի առարկայից դուրս հաջորդական հարցադրումներ են արվել, որոնք, ըստ Դատարանի, եղել են ոչ միայն ոչ վերաբերելի, այլև ոչ կոռեկտ, որի պատճառով Դատարանը մի քանի անգամ փորձել է սաստել և կարգի հրավիրել փաստաբանին, սակայն՝ ապարդյուն. փաստաբան Գևորգ Մելքոնյանը շարունակել է հարցադրումներ կատարել՝ առանց Դատարանի նախազգուշացումներին ուշադրություն դարձնելու: Դատարանը փաստաբանին նախազգուշացրել է, որ փաստաբանին պատասխանատվության ենթարկելու միջնորդություն կուղարկի Պալատ, որին ի պատասխան՝ փաստաբանը դատավորի հետ խոսել է «դու-ով» և Դատարանին պատասխանել. «ուղարկի՛»:

Դատարանը գտել է, որ փաստաբան Գևորգ Մելքոնյանը դատավորի օրինական

կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու և դատական նիստի կարգը խախտող գործողություններ կատարելու միջոցով Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք է դրսևորել:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 23.11.2017թ. թիվ 461-Ա/ԿԳ-17182 որոշմամբ փաստաբան Գևորգ Մելքոնյանի Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Սույն կարգապահական գործով Դիմող է ճանաչվել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Ն. Կարապետյան):

28.11.2017թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնվել է փաստաբան Հովհաննես Մաթևոսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել: Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողը 10.01.2018թ. ներկայացրել է բացատրություն, որի համաձայն՝ դատական նիստի ժամանակ նա հարցաքննվող վկային հարցադրում է ուղղել, որը, իր կարծիքով, գործի ճիշտ լուծման համար նշանակություն ուներ: Պատասխանողի կարծիքով, նա անհարգալից վերաբերմունք չի ցուցաբերել Դատարանի նկատմամբ, այլ, փոխարենը, Դատարանը սահմանափակել է վստահորդի շահերը ներկայացնելու Պատասխանողի պարտականությունը:

Խորհրդի նիստին Պատասխանողը ներկայացել է և հայտնել է հետևյալը:

Սույն գործով Պատասխանողը եղել է հայցվոր կնոջ ներկայացուցիչը և դատական նիստում հարցադրում է արել վկային՝ պատասխանող ամուսնու եղբորը, ով ասել է, որ գորգը նվիրել է հորը, այնինչ գործում առկա ապացույցները վկայել են, որ գորգը հանդիսանում է ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությունը: Դատարանը գտել է, որ նշյալ հարցադրումը վեճի լուծման համար էական նշանակություն չունի, իսկ Պատասխանողը պնդել է հակառակը: Դատավորի ձայնի տոնայնությունն այնպիսին է, որ դրդում է անձին նույնպես բարձրաձայնել ձայնը, հնարավոր է նաև Պատասխանողը չի լսել, որ դատավորն իրեն մի քանի անգամ ասել է, որ գործին չվերաբերող հարցադրումներ է անում: Ինչ վերաբերում է Դատարանին «դու-ով» դիմելուն, Պատասխանողը նշել է, որ նման բան չի եղել, չի հիշում նաև, որ Դատարանին ասած լինի «ուղարկի՛»: Փոխարենը՝ ըստ Պատասխանողի՝ Դատարանն իրեն անվանել է «անպատկառ», ինչով վիրավորել է Պատասխանողին: Ընդհանուր առմամբ, դատավորն իրեն վերաբերվել է մեծամտորեն:

3.3. <u>Վկաների ցուցմունքները</u>.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Նախապատրաստողը 27.01.2018թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 30.01.2018թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 19.04.2018թ. ժամը 18:30-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, **հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

1. Պատասխանող Գևորգ Մելքոնյանը թիվ ԵՄԴ/3474/02/16 քաղաքացիական գործում ներկայացնում է հակընդդեմ հայցվորի շահերը.
2. Թիվ ԵՄԴ/3474/02/16 քաղաքացիական գործով 13.10.2017թ. նշանակված դատական նիստում Պատասխանողը հարցեր է տվել հարցաքննվող վկային.
3. Դատարանը գտել է, որ նշված հարցերը վերաբերելի և թույլատրելի չեն և կարգադրել է Պատասխանողին դադարեցնել նման հարցապնդումներ անելը
4. Պատասխանողն առարկել է Դատարանի գործողությունների դեմ.
5. Պատասխանողի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու վերաբերյալ Դատարանը Պատասխանողին զգուշացրել է 13.10.2017թ. նշանակված դատական նիստում, այնուհետև՝ 16.10.2017թ. Դատարանը Պատասխանողի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին որոշում է կայացրել՝ 13.10.2017թ. դատական նիստում դրսևորած վարքագծի համար:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ, թիվ ԵՄԴ/3474/02/16 գործով 13.10.2017թ. նշանակված դատական նիստի ձայնագրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները</u>.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն Գևորգ Մելքոնյանը փաստաբան է հանդիսանում 15.11.1990թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 1 անգամ հարուցվել է

կարգապահական վարույթ՝ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով, որը կարճվել է (կիրառվել է արտոնություն):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ Պալատի նախագահի 23.11.2017թ. թիվ 461-Ա/ԿԳ-17182 որոշմամբ փաստաբան Գևորգ Մելքոնյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար*:

Օրենքի 39.[1]-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝ … պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով փաստաբանների պալատին դիմելու մասին դատարանի սանկցիան:*

Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ *կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:*

Կարգի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝ … պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով փաստաբանների պալատին դիմելու մասին դատարանի սանկցիան:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի[1] 115-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ *Դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի գործին մասնակցող անձանց, ներկայացուցիչների և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները. …. 4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը:*

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *Գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը իրականացվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ: Սույն հոդվածի առաջին մասի 4-րդ կետով նախատեսված դատական սանկցիան պարտադիր հիմք է դատախազի կամ փաստաբանի*

[1] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հղումները կատարված են 23.10.2017թ. դրությամբ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն (ընդունված՝ 17.06.1998թ., ՀՀՊՏ 1998.09.09/20(53))

նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

Նշված նորմերից հետևում է նաև, որ Պալատին դիմելն իրականացվում է նույն դատական նիստում՝ դատարանի առանձին որոշմամբ:

Մինչդեռ, սույն կարգապահական գործի շրջանակներում հաստատվել է, որ Պատասխանողի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու վերաբերյալ Դիմողը Պատասխանողին զգուշացրել է 13.10.2017թ. նշանակված դատական նիստում: Այդ օրը չի կայացրել և չի հրապարակել Պատասխանողի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու վերաբերյալ որոշում: Այնուհետև՝ 16.10.2017թ. Դատարանը Պատասխանողի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին որոշում է կայացրել՝ 13.10.2017թ. դատական նիստում դրսևորած վարքագծի համար: Այսինքն, տվյալ դեպքում Դատարանը, հիշյալ որոշումը կայացնելով, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան որոշում կայացնելու համար սահմանված պահանջները: Հետևաբար, բացակայում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը՝ դատական սանկցիան՝ նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշումը Պալատ դիմելու մասին:

Վերը նշվածից ելնելով՝ Պալատի խորհուրդը չի անդրադառնում փաստաբան Գևորգ Մելքոնյանի գործողությունների իրավաչափությանը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 23.11.2017թ. թիվ 461-Ա/ԿԳ-17182 որոշման հիման վրա փաստաբան Գևորգ Մելքոնյանի (արտոնագիր՝ թիվ 224) նկատմամբ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայան

19 ապրիլի 2018թ.
թիվ ԿԳ/77-Ա
ք. Երևան